ԹՎԻՆԻՆԳՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԶԵԿՈՒՅՑ

Ջրիհաշիվների

վերաբերյալ

Գործողություն 6.3. Ջրի հաշիվների կազմում I

Առաքեությունն իրականցրել են

Պրն Ստեֆանո Տեսինյին Իստատից
Տկն Սիմոնա Ռամբերտին Իստատից

2017թ. հունվարի 30-ից փետրվարի 3-ը

Վերջնական տարբերակ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Փորձագետների կոնտակտային տվյալներ

Սիմոնա Ռամբերտի
Իստատ
Հասցե՝ Օչեանո Պաչիֆիկոպոդոտա, Հռոմ 171 00144, Իտալիա
Հեռ. +390646734322
Էլ-փոստ. ramberti@istat.it

Ստեֆանո Տերսինյի
Իստատ
Հասցե Լիեջիի պոդոտա, Հռոմ 13 00198, Իտալիա
Հեռ. +390646737511
Էլ-փոստ.stefano.tersigni@istat.it

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկություններ 6
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 9
Հավելված 2. Առաքելության ծրագիրը 11
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ 13

Հապավումների ցանկ

ՆՋՄՀՏՀՋԿ/	Ներքին ջրերի միացյալ հարցաթերթ
ՋՖՀՀ	Ջրի ֆիզիկական հոսքերի հաշիվներ
ԲՏՀՀ-Ջուր	Բնապահպանական-տնտեսական հաշվառման համակարգ ջրի համար
ՋՀ	Ջրի հաշիվներ
ՋՌ	Ջրային ռեսուրսներ
ՋՎ	Ջրիվիճակագրություն

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՆՋՄՀ	ՏՀՋԿ/Ներքին ջրերի միացյալ հարցաթերթ
ՋՖՀՀ	Ջրի ֆիզիկական հոսքերի հաշիվներ
ՕՄՖԱ/PSUT	Ջրօգտագործման և ջրամատակարարման ֆիզիկական հոսքերի աղյուսակներ
ՋԲՏՀՀ/SEEAW	Ջրի բնապահպանական-տնտեսական հաշվառման համակարգ
ՋՀ	Ջրի հաշիվներ
ՋՌ	Ջրային ռեսուրսներ
ՋՎ	Ջրի վիճակագրություն

1. Ընդհանուր մեկնաբանություն

Սույն առաքելության հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Հաշվետվությունը վերաբերում է 6.3 գործողությանը և սույն գործողության հետ կապված քայլերին, որոնք կիրականացվեն ըստ պլանավորվածի:

Իստատի առաքելության նպատակներն էին.

- Իրավիճակի գնահատում և ՇԵ կողմից նախորդ առաքելությունից հետո իրականացված աշխատանքի ներկայացում
- Ներքին ջրերի միացյալ հարցաթերթերի և ջրի ֆիզիկական հոսքերի հաշիվների աղյուսակների վերանայում և լրացման փորձառություն
- Ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակների կազմումը գործնականում. Կազմման առաջին փորձ
- Համապատասխան շահառուների ընդգրկվածություն քննարկումներում

ԱԵ փորձագետները ցանկանում են իրենց անկեղծ շնորհակալությունն արտահայտել իրենց հետ հանդիպած բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին՝ բարի և արհեստավարժ աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որն ստացել են Հայաստանում իրենց գտնվել ու ընթացքում, և ինչը մեծապես հեշտացրել է նրանց աշխատանքը: Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և կարող են չհամընկնել ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Իստատի կամ Դանիայի վիճակագրության տեսակետների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

2.1 Իրավիճակի գնահատում և ՇԵ կողմից աշխատանքի ներկայացում, որն իրականացվել է Իստատի կողմից նախորդ առաքելությունից հետո

Սույնառաքելության շրջանակներում ձեռք բերված առաջին նպատակը Իստատի նախորդ առաքելությունից և ՀՀ ԱՎԾ կողմից Իտալիա կայացած այցից հետո կատարած աշխատանքի ներկայացումն էր ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից: Մասնավորապես, Իստատի կողմից սահմանված բոլոր պահանջները կատարվել են:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցները ներկայացրեցին.

- Համարյա ամբողջությամբ լրացված և արդիականացված աղյուսակները (ըստներքին ջրերի համատեղ հարցաթերթի),
- Ջրի հոսքերի սինթետիկ սխեման, որը շատ օգտակար է ջրառի, ջրօգտագործման և ջրահեռացման առաջին գնահատականը ստանալու համար,
- Ֆիզիկական և ֆինանսական տվյալներով աղյուսակ, որն օգտակար է ծավալների և տնտեսության հատվածների միջև որոշ կարևոր հատումներ գնահատելու համար:

2.2 Ներքին ջրերի համատեղ հարցաթերթերի և ջրի ֆիզիկական հոսքերի աղյուսակների կազմման վերանայում և փորձառություն

ՀՀ ԱՎԾ կողմից արդեն կազմված աղյուսակների վերլուծության ընթացքում Իստատի մասնագետներն ընդգծեցին որոշ առանցքային կետեր, և հայ և իտալացի գործընկերները սկսեցին վերանայել առկա տվյալները՝ստուգելու համար մի քանի

հաշվարկային քայլեր: Այս նպատակով նույնականացվեցին որոշ կետեր, որպեսզի հետագայում ստուգվեն և արդիականացվեն՝ ըստ վերանայված սահմանումների, և, ինչպես միշտ, միջազգային գրականության և տերմինաբանական բառարանի:
Ծավալվեց հետաքրքիր և խորը քննարկում որոշ կետերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են երկրին բնորոշ կողմերի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար:
Քննարկման ամենակարևոր կետերով անդրադարձ է կատարվել տվյալների աղբյուրներին և կոնկրետ կետերի հետ կապված մեթոդաբանական ասպեկտներին: Այս պատճառով մասնավորապես ներքին ջրերի համատեղ հարցաթերթի աղյուսակների համար վերլուծվել են Եվրոստատի ձեռնարկի ուղեցույցները, հատկապես որոշ առանձին գլուխներ՝տվյալների և սահմանումների միջև համապատասխանությունը ստուգելու նպատակով:
Բացի այդ, քանի որ որոշ ցուցանիշների համար նույնականացվել են որոշ խնդրահարույց կետեր, Իստատը կարծիք է արտահայտել այն մասին, որ անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ ԱՎԾ աշխատակիցները վերանայեն նման արժեքները մինչև հաջորդ առաքելությունը:

2.3 Ջրօգտագործման և ջրամատակարարման համար հիբրիդային աղյուսակների կազմման տեսական և գործնական ասպեկտները: Կազմման առաջին փորձը

Հաշվի առնելով հայկական տվյալների բազաների հարստությունը և ջրի հաշիվների շրջանակի ընդհանուր համալիր կառուցվածքը, որը դեռևս ամբողջ աշխարհում մշակման գործընթացում է, Իստատի փորձագետները հանգել են այն գնահատականին, որ թվինինգ ծրագրի շրջանակներում որպես վերջնական քայլ պետք է դիտարկվի հետևյալի կազմումը.

- Ներքին ջրերի համատեղ հարցաթերթի աղյուսակներ,
- Ջրամատակարարման և ջրում ֆիզիկական արտահոսքերի աղյուսակներ,
- Ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակներ,
- Տնտեսության մեջ ջրի հոսքերի մատրիցա

Վերջին աղյուսակը, որը վերաբերում է տնտեսության ներսում ջրի հոսքերին, հայկական ծրագրի վերջնական նպատակներում նոր ենթակետ է: Բայց հաշվի առնելով հայկական տվյալների բազայում ջրի վերաբերյալ տվյալների հասանելիությունը, Իստատի աշխատակիցներն առաջարկել են լրացնել այս նոր աղյուսակը, որը վստահաբար կհարստացնի ջրի վերաբերյալ տեղեկատվական ռեսուրսը:

Այս իմաստով հաշվի է առնվել ջրի հաշիվների միջազգային փորձը (Դանիա, Ավստրալիա,...), որի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդհանուր առմամբ մոտեցումը թեմային հարմարեցվել է երկրում առկա տեղեկատվությանը համահունչ:

Այս ամիսների ընթացքում արտահայտված կարծիքներին հավատարիմ մնալով մենք բոլորս գիտենք, որ ջրի հետ կապված աշխատանքը պետքէհղկել և բարելավել ժամանակի ընթացքում և այս թվինինգ ծրագիրը Հայաստանի համար ավելի շատ մեկնարկային կետ է, քան վերջակետ:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցները ողջունեցին Իստատի առաջարկը, այնուհետև սկսվեց աշխատանքը ջրամատակարարման և ջրօգտագործման ֆիզիկական աղյուսակների և ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակների վրա: Երկրորդ դեպքում փաստորեն ֆիզիկական և ֆինանսական տվյալների միավորումը թույլ է տալիս հաշվարկել հետաքրքրական և օգտակար ցուցանիշներ հետազոտողների և քաղաքականություն մշակողների համար:
Ֆինանսական մասի համար անհրաժեշտ եղավ ազգային հաշիվների բաժնի հետ համագործակցություն (տես 2.4 կետը):

Այդ պատճառով շաբաթվա մեծ մասը նվիրված էր այս աղյուսակների վերանայմանը, և՛ մեթոդաբանական տեսակետից, և՛ գործնական տեսակետից:

Ջրամատակարարման և ջրօգտագործման ֆիզիկական աղյուսակների և ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակների վրա արված համատեղ աշխատանքը շատ կարևոր էր և արդյունավետ:

Այս մասում տրված ընդհանուր խորհուրդը հետևյալն է. երբեք չմոռանալ մտքում պահել մեթոդաբանական մասը, այս դեպքում ի նկատի է առնվում SEEA-Ջուր Եվրոստատի կողմից երաշխավորված մեթոդաբանական ձեռնարկը: Այս պատճառով SEEA-Ջուր ձեռնարկի որոշ մասեր տպվել և միասին վերլուծվելեն, մասավորապես որոշ օրինակներ են ուսումնասիրվել ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես են կառուցված աղյուսակները:

2.4 Համապատասխան շահառուների ներգրավվածություն քննարկումներում

Աշխատանքային օրերի ընթացքում ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից քննարկման են հրավիրվել շահառուներ նախարարություններից և ՀՀ ԱՎԾ ազգային հաշիվների վարչությունից, ովքեր ընդգրկված են բնապահպանական ոլորտում և ֆինանսական ազգային հաշիվների կազմման աշխատանքներում: Որպես առաջին կարևոր արդյունք սա հնարավոր դարձրեց հիբրիդային աղյուսակների ֆինանսական մասը կազմելը (կետ 2.3):

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Եզրակացություններ

- ՀՀ ԱՎԾ-ն լավ աշխատանք է կատարել ըստ Իստատի Երևան կատարած նախորդ առաքելությունից և Իտալիա կայացած ուսուցողական այցից հետո՝ համաձայն նախանշված ճանապարհային քարտեզի (6.2 և 6.4 գործողություններ):

- Սույն շաբաթվա ընթացքում ջրի վիճակագրության ցուցանիշների վերանայումը լի էր նոր կետերով, որոնք խորությամբ ուսումնասիրվել են (և պետք է հետագայում շարունակվեն ուսումնասիրվել) միջազգային վիճակագրական ստանդարտներին հղումներով (Միավորված ազգեր, Եվրոստատ), նախքան աղյուսակների վերջնական վավերականացումը:

- Ընթացիկ 6.3 գործողության շրջանակներում մշակվել են ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակների տեսական և գործնական ասպեկտները:

- Ներկայացվել են ջրի ֆինանսական հաշիվների մեթոդաբանական ասպեկտներ, հաշվի առնելով միջազգային շրջանակները (SEEA 2003, SEEA-Ջուր 2012):

- Այս օրերին ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակների կազմումը կարևոր պահ էր որոշ կարևոր կետերի քննարկման, մի շարք անորոշությունների լուծման և նոր անորոշությունների քննարկման համար, որոնք հանգեցրեցին դրանց ավելի լավ ընկալման:

- Այս ամիսների ընթացում ջրի վերաբերյալ Հայաստանում առկա տվյալները վերլուծելով, ընդհանուր առմամբ հաշվի առնելով այն փաստը, որ ամբողջ աշխարհում ջրի հաշիվները մշակման գործընթացում են, մերկարծիքն այն է, որ թվինինգ ծրագրի շրջանակներում որպես վերջնական քայլ պետք է կազմվեն ներքին ջրերի աղյուսկները, ջրօգտագործման և ջրամատակարարման և դեպի ջրընդունիչներ /միջավայր/ արտահոսքերի ֆիզիկական աղյուսակները, ջրօգտագործման և ջրամատակարարման հիբրիդային աղյուսակները:

- Հաշվի առնելով հայկական տվյալների բազաների հարստությունը, կարծում ենք, որ միգուցե օգտակար կլինի արտադրել նաև որոշ աղյուսակներ, որոնք նախապես նախատեսված չէին, բայց միգուցե դրանք հեշտ է լրացնելը (ինչպես օրինակ ջրի փոխանցումների մատրիցան): Փաստացի այս աղյուսակները կարող են կարևոր արժեք ավելացնել <<ջուրը>>հասկանալու համար:

- Իստատի և ՀՀ ԱՎԾ միջև համագործակցությունը շարունակում է մնալ շատ արդյունավետ, նրանք փոխանակում են փորձ և արդյունք:

Առաջարկություններ

- Շարունակել խորը ուսումնասիրել գրքացանկում նշված պաշտոնական վիճակագրական ձեռնարկները (մասնավորապես SEEA-Ջուր ձեռնարկը), ինչը հիմնական պայման է հանդիսանում ջրի ֆիզիկական հոսքի հաշիվների և ջրամատակարման և ջրօգտագործման հիբրիդային հաշիվների հաջող կազմման համար

- Մի մոռացեք, որ ՋՀ-ն շարունակական գործընթաց է

- Կասկածների կամ անորոշությունների դեպքում ՀՀ ԱՎԾ աշխատակիցները պետք է կապ հաստատեն Իստատի փորձագետների հետ ցանկացած պահի, էլ-փոստով կամ Skype-ով՝անհրաժեշտ աջակցություն ստանալու համար, և ընդհանուր առմամբ խնդիրները և լուծումները քննարկելու համար

Առաջ շարժվելու և հաջորդ առաքելության նախապատրաստման համար անրաժեշտ քայլերը.

	Վերջնաժամկետ	**Պատասխանատու անձ**
Արդիականացնել նախկինում կազմված ներքին ջրերի համատեղ հարցաթերթը և ջրօգտագործման և Ջրամատակարարման ֆիզիկական հոսքերի աղյուսակները՝համաձայն 6.3 գործողությունում քննարկված վերանայումների	2017թ. փետրվարի 28	ՀՀ ԱՎԾ
Ջրին առնչվող արտադրանքի վերաբերյալ ֆինանսական հաշիվների կոնցեպտուալ շրջանակի և Մեթոդաբանությունների ուսումնասիրություն: Մասնավորապես, առաջարկում ենք խորը վերլուծել SEEA-Ջուրը և ուշադրություն դարձնել ներկայացված բոլոր օրինակներին և վերլուծված բացառություններին: Մասնավերապես ուշադրություն դարձնել 3 և 5 գլուխներին:	2017թ. մարտի 15	ՀՀԱՎԾ
Ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակների կազմում	2017թ. մարտի 15	ՀՀԱՎԾ
Տնտեսության մեջ ջրի հոսքերի մատրիցայի կազմում	2017թ. մարտի 10	ՀՀ ԱՎԾ
Քննարկել հիբրիդային աղյուսակները կազմելու ընթացքում ծագած կարևոր ասպեկտները	2017թ. մարտի 15	ՀՀ ԱՎԾ
Առաջին գնահատումները ՋՖՀՀ և ջրամատակարարման և ջրօգտագործման հիբրիդային աղյուսակներից Ստացված ցուցանիշների վերաբերյալ	2017թ. մարտի 20	ՀՀ ԱՎԾ
Տվյալների տարածման ձևաչափի նախագծում, մասնավորապես հրապարակման ամփոփման նախագծի Պատրաստում թվինիգի եզրափակիչ փուլում, հավելվածում աղյուսակների և քարտեզների ցուցակ	2017թ. մարտի 20	ՀՀ ԱՎԾ
Քննարկման ներկայացնել մթնոլորտային արտանետումների հաշիվների աղյուսակները՝համաձայն Իտալիա ուսուցողական այցի ընթացքում ձեռքբերված պայմանավորվածության	2017թ. մարտի 10	ՀՀ ԱՎԾ

Հավելված1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք **ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15** **2017թ. հունվարի 30-փետրվարի 3**

Բաղադրիչ 6. Ջրի հաշիվներ

Գործողություն 6.3. Ջրի հաշիվների կազմում

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքները և չափանիշները.

Պարտադիր արդյունքները.
- Կազմված ջրի հաշիվներ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.
- Ջրի հաշիվների համար տվյալների աղբյուրների (հասանելիության, տեղեկատվական հոսքի) գույքագրման սահմանում (2016թ. ապրիլ)
- Ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն (2017թ. հունվար)
- Իրականացված հանդիպում շահագրգիռ կողմերի հետ (2017թ. հուլիս)
- Կազմված ջրի հաշիվներ (2017թ.հուլիս)
- ՀՀ ԱՎԾ վերապատրաստված անձնակազմ ջրի հաշիվները կազմելու գծով (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Ջրի հաշիվների կազմում
- Ինչպես ինտեգրել ջրի հաշիվները ազգային հաշիվներում
- Քննարկումներում համապատասխան շահառուների ներգրավվում

2. Գործողության սպասվող արդյունքը

- Ջրի հաշիվների կազմման աշխատանքը իրականացված է
- Ջրի հաշիվների ինտեգրումը ազգային հաշիվներում նույնականացված է
- Հաջորդ գործողությունների համար աշխատանքային ծրագրի սահմանում.
    - 6.5 *«Ջրիհաշիվներիկազմում II»* նախատեսվածէ 2017 թ. մարտի 27-30-ը
    - 6.6 «Ձեռքբերումների վերահսկում և ապագայի համար առաջարկությունները» նախատեսված է 2017 թ. մայիսի 22-25-ը:

3. Մասնակիցները

<u>ՀՀ ԱՎԾ</u>
Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն. Յուրիկ Պողոսյան
- Տկն. Նելլի Բաղդասարյան

Աշխատակիցներ բաժնից

- Տկն Նաիրա Մանդալյան– ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար
- Տկն Անի Համբարձումյան
- Տկն Աստղիկ Պողպոմոգովա

Այլ աշխատակիցներ ՀՀ ԱՎԾ-ից

- Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնից
- Գյուղատնտեսության վիճակագրության բաժնից
- Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնից
- Ֆինանսների վիճակագրության բաժնից
- Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնից
- Շինարարության վիճակագրության բաժնից նույնպես կհրավիրվեն

<u>Գործողությանը մասնակցող այլ շահագրգիռ կողմեր.</u>

Աշխատակիցներ

- ՀՀ բնապահպանության նախարարությունից
- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից
- ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից
- ՀՀ ֆինանսների նախարարությունից
- ՀՀ առողջապահության նախարարությունից
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից
- Միջազգային կազմակերպություններից (ՄԱԶԾ, ԱՄՆ ՄԶԳ, ՀԲ և այլն)

Նույնպես կհրավիրվեն:

<u>ԱՊ փորձագետներ</u>
Պրն Ստեֆանո Տերսինյի, փորձագետ, Իստատ
Տկն Սիմոնա Ռամբերտի, փորձագետ, Իստատ

Հավելված 2. Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի (30/1) *(սկիզբը ժամը 11:00-ին)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը Իրավիճակի գնահատում և ՇԵ կողմից նախորդ առաքելությունից հետո կատարված աշխատանքի ներկայացում
Երեքշաբթի, առավոտ (31/1)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ջրի ֆինասական հաշիվների էության և աղյուսակների ներկայացում, այլ երկրների փորձը
Երեքշաբթի, կեսօրից հետո (31/1)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ջրի ֆինանսական հաշիվների ցուցանիշների սահմանում, հաշվառման և հաշվարկման մեթոդաբանական մոտեցումների քննարկում
Չորեքշաբթի, առավոտ (1/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի,ՇԵ փորձագետների և ՀՀ բնապահպանության նախարար. շահառու/ներ/ի հետ	Քննարկումների շարունակում, մասնակցությամբ ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցչի
Չորեքշաբթի, կեսօրից հետո (1/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկման շարունակություն: Ֆինանսական աղյուսակների վերջնական ձևաչափի ընտրում, լրացման գործիքակազմի և մեխանիզմների սահմանում Մշակութային միջացառում
Հինգշաբթի,առավոտ (2/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի, ՇԵ փորձագետների և ՀՀ բնապահպանության ու ֆինանսների նախարարությունների և այլ շահառուների հետ (շրջանակը կճշտվի	Հանդիպում շահառուների հետ: Բնապահպանական հաշիվների, մասնավորապես ջրի հաշիվների էությունը, տեղն ու դերը ազգային հաշիվների համակարգում: /Իստատի փորձագետներ/(1-2 ժամ, հարց ու պատասխաններով)

		քննարկման ժամանակ)	
Հինգշաբթի, կեսօրից հետո (2/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ Չպլանավորված հանդիպումներ	Մինչև հաջորդ առաքելությունը տնային աշխատանքի սահմանում Վեջնական պարզաբանումներ ՇԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, առավոտ (3/3)	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	Օդի հաշիվների մասով նախնական քննարկում Եզրակացություններ և որոշումներ, և ՇԵ փորձագետների հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիր

Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք

<u>ՀՀ ԱՎԾ.</u>

Պրն Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Տկն Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Պրն Յուրիկ Պողոսյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Տկն Նելլի Բաղդասարյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
Տկն Նաիրա Մանդալյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ
Անի Համբարձումյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի կրտսեր մասնագետ
Տկն Աստղիկ Պողպոմոգովա, վիճակագիր, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
Տկն Նադեժդա Ասվածատուրովա, գլխավոր մասնագետ, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին

<u>Արտաքին շահառուներ.</u>

Տկն Գոհար Հարությունյան, Թեստավորման և ծրագրավորման մասնագետ, ՀՀ բնապահպանության նախարարության «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ
Տկն Լուսինե Ավետիսյան, Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմների, ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի բաժնի պետ, ՀՀ բնապահպանության նախարարություն

<u>ԹՄԽ թիմ.</u>
Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգի մշտական խորհրդատու
Լիանա Աթոյան, ԹՄԽ օգնական
Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ